ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎՏԵՎՈՒԹՅՈՒՆ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ

ՀՀ, ք. Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5, հեռ. (+374 10) 59 22 59, էլ. փոստ unibank@unibank.am

Էական փաստերը և տեղեկությունները ներառող հաշվետվություն թիվ 2, 02 մայիսի 2017

Արժեթղթերի դասը՝ սովորական բաժնետոմս

Արժեթղթերի քանակը՝ 172,886,525 հատ

Արժեթղթերի դասը՝ արտոնյալ հաստատագրված բաժնետոմս

Արժեթղթերի քանակը՝ 32,010,000 հատ

Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ 100 ՀՀ դրամ

Ստորագրող անձինք՝

Գոհար Գրիգորյան	**Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - Գլխավոր հաշվապահ**		03.05.2017
Դավիթ Պետրոսյան	**Վարչության նախագահի տեղակալ, Կորպորատիվ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն**		03.05.2017
Մեսրոպ Հակոբյան	**Վարչության նախագահի տեղակալ, Օպերացիոն սպասարկման և տեղեկատվական համակարգերի գծով տնօրեն**		
Օվսաննա Առաքելյան	**Վարչության նախագահի տեղակալ, Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետբերման գծով տնօրեն**		03.05.2017
Գուրգեն Ղուկասյան	**Վարչության նախագահի տեղակալ, Մանրածախ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն**		03.06.2017
Վարդան Աթայան	**Վարչության նախագահ - Գործադիր տնօրեն**		03.05.2017

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորի եզրակացություն

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2016թ.



Բովանդակություն

	էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն	3
Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն	4
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն	5
Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն	6

Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

www.grantthornton.am

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերին և խորհրդին

Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (Բանկ) ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, այդ տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները՝ քաղված «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից:

Մեր կարծիքով 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից քաղված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են այդ ֆինանսական հաշվետվություններին:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում (ՖՀՄՍ): Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Բանկի աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

Grant Thornton

Աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններ

Մենք արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական կարծիք աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2017թ. ապրիլի 26-ի մեր եզրակացությունում:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտորական ստուգում անցած ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որտեղ ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են միևնույն ձևով, ինչպես և աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների, որոնք չեն ներառվում այս ամփոփ ֆինանսական հաշվետվություններում:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա, արտահայտել կարծիք ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ աուդիտի միջազգային ստանդարտ 810 *«Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ»* ստանդարտին համապատասխան:

Գագիկ Գյուլբուդաղյան

Տնօրեն

Զարուհի Ղարիբյան

Աուդիտի ղեկավար

26 ապրիլի 2017թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	21,329,971	19,714,397
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(12,968,927)	(13,431,362)
Զուտ տոկոսային եկամուտներ	**8,361,044**	6,283,035
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	1,036,568	1,334,902
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(289,585)	(257,701)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ	746,983	1,077,201
Զուտ առևտրային եկամուտ	270,717	677,989
Այլ եկամուտներ	1,452,759	1,383,757
Արժեզրկման ծախս	(4,436,968)	(2,398,395)
Անձնակազմի գծով ծախսեր	(3,128,249)	(3,070,810)
Հիմնական միջոցների մաշվածություն	(450,013)	(412,952)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	(84,359)	(80,796)
Այլ ծախսեր	(3,150,583)	(2,912,720)
Շահույթ/(վնաս) մինչև հարկում	(418,669)	546,309
Շահութահարկի գծով ծախս	(24,549)	(187,828)
Տարվա շահույթ/(վնաս)	**(443,218)**	**358,481**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում		
Հիմնական միջոցների վերագնահատում	1,096,106	45,782
Չվերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ	(219,221)	(9,157)
	876,885	36,625
Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ/(վնաս)	664,809	(468,167)
Վերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ	(132,962)	93,633
	531,847	(374,534)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկերից հետո	1,408,732	(337,909)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	965,514	20,572
Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ/(վնաս)	(0.00348)	0.00157

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	33,547,636	26,012,823
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	3,268,547	1,245,854
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	99,004	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	118,627,063	110,181,548
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	14,399,954	4,411,861
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	4,136,760
Հիմնական միջոցներ	7,651,713	5,165,342
Ոչ նյութական ակտիվներ	1,380,101	1,314,048
Կանխավճար շահութահարկի գծով	81,010	284,081
Այլ ակտիվներ	6,341,061	5,387,543
Ընդամենը՝ ակտիվներ	185,396,089	158,139,860
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		
Պարտավորություններ		
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5,042,688	22,255,512
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	128,012,569	103,611,025
Փոխառություններ	13,260,387	8,071,190
Թողարկված պարտքային արժեթղթեր	2,652,531	-
Հետաձգված հարկային պարտավորություն	957,978	731,041
Այլ պարտավորություններ	626,893	762,000
Ընդամենը՝ պարտավորություններ	150,553,046	135,430,768
Սեփական կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ	19,093,378	14,167,947
Էմիսիոն եկամուտ	7,790,481	1,387,422
Գլխավոր պահուստ	426,482	421,851
Այլ պահուստներ	916,048	(492,684)
Չբաշխված շահույթ	6,616,654	7,224,556
Ընդամենը՝ սեփական կապիտալ	34,843,043	22,709,092
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ	185,396,089	158,139,860

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են Բանկի գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից 2017 թվականի ապրիլի 26-ին:

Վարդան ԱԹԱՅԱՆ
Վարչության նախագահ

Գոհար ԳՐԻԳՈՐՅԱՆ
Գլխավոր հաշվապահ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստ	Հիմնական միջոցների գծով վերագնահատման պահուստներ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ	13,100,700	-	370,137	(539,186)	384,411	7,120,787	20,436,849
Բաժնետիրական կապիտալի ավելացում	1,067,247	1,387,422	-	-	-	-	2,454,669
Հատկացում պահուստին	-	-	51,714	-	-	(51,714)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-		-	-	-	(202,998)	(202,998)
Սեփականատերերի հետ գործարքներ	1,067,247	1,387,422	51,714	-	-	(254,712)	2,251,671
Տարվա շահույթ	-	-	-	-	-	358,481	358,481
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Հիմնական միջոցների վերագնահատում	-	-	-	-	45,782	-	45,782
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ վնաս	-	-	-	(468,167)	-	-	(468,167)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	93,633	(9,157)	-	84,476
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(374,534)	36,625	358,481	20,572
Հաշվեկշիռը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	14,167,947	1,387,422	421,851	(913,720)	421,036	7,224,556	22,709,092
Բաժնետիրական կապիտալի ավելացում	4,925,431	6,403,059	-	-	-	-	11,328,490
Հատկացում պահուստին	-	-	4,631	-	-	(4,631)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-		-	-	-	(160,053)	(160,053)
Սեփականատերերի հետ գործարքներ	4,925,431	6,403,059	4,631	-	-	(164,684)	11,168,437
Տարվա վնաս	-	-	-	-	-	(443,218)	(443,218)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Հիմնական միջոցների վերագնահատում	-	-	-	-	1,096,106	-	1,096,106
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	-	-	-	664,809	-	-	664,809
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	(132,962)	(219,221)	-	(352,183)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	531,847	876,885	(443,218)	965,514
Հաշվեկշիռը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,093,378	7,790,481	426,482	(381,873)	1,297,921	6,616,654	34,843,043

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	(418,669)	546,309
Ճշգրտումներ		
Արժեզրկման ծախս	4,436,968	2,398,395
Բոնազանձված գույքի արժեզրկումից/(արժեզրկման հակադարձումից) և իրացումից (օգուտներ)/կորուստներ	(44,451)	223,174
Հիմնական միջոցների արժեզրկում/(արժեզրկման հակադարձում)	89,434	(103,881)
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	534,372	493,748
Հիմնական միջոցների օտարումից վնաս	16,731	17,021
Ստացվելիք տոկոսներ	(1,024,021)	(2,280,884)
Վճարվելիք տոկոսներ	(303,381)	495,761
Ածանցյալ գործիքների վերագնահատում	256,470	-
Ոչ առևտրային ակտիվների արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ	(181,453)	(179,415)
Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	3,362,000	1,610,228
(Աճ)/նվազում գործառնական ակտիվներում		
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(2,080,268)	(320,892)
Ածանցյալ ֆինանսական գործիքներ	99,004	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(14,562,132)	9,379,240
Այլ ակտիվներ	2,694,194	(623,137)
Աճ/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(756)	(826,458)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	24,521,896	1,490,851
Այլ պարտավորություններ	(54,014)	(62,136)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը	13,979,924	10,647,696
Վճարված շահութահարկ	53,276	31
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	14,033,200	10,647,727
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում	(8,657,556)	(3,938,810)
Հիմնական միջոցների առք	(2,031,483)	(375,118)
Հիմնական միջոցների վաճառք	85,040	71,922
Ոչ նյութական ակտիվների առք	(150,412)	(140,062)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	(10,754,411)	(4,382,068)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	13,783,159	2,454,669
Շահաբաժինների վճարում	(246,850)	(500,321)
Ֆինանս. կազմակերպ. վարկերի մարում	(17,332,058)	(9,654,080)
Պարտատոմսերի թողարկում	2,637,137	-
Այլ երկարաժամկետ վարկերի և փոխառությունների ստացում/(մարում)	5,543,439	(6,292,311)
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	4,384,827	(13,992,043)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	7,663,616	(7,726,384)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	26,012,823	34,036,384
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(128,803)	(297,177)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	33,547,636	26,012,823
Լրացուցիչ տեղեկատվություն		
Ստացված տոկոսներ	20,305,950	17,765,762
Վճարված տոկոսներ	(13,272,308)	(12,935,601)

Յունիբանկ ԲԲԸ 2016թ. գործունեության վերաբերյալ

Հաշվետու տարվա ընթացքում «Յունիբանկ» ԲԲԸ-ն հաջողությամբ շարունակել է իր ռազմավարության իրականացումը՝ ապահովելով աճ բոլոր հիմնական ցուցանիշներով:

2016թ.-ին բանկը իրականացրել է անվանական սովորական բաժնետոմսերի երեք թողարկում և ամբողջությամբ տեղաբաշխել ներկայացված ծավալը և ցուցակել այն Nasdaq OMX ֆոնդային բորսայում: Յունիբանկը զգալի համալրել է ընդհանուր կապիտալը և սահմանված ժամկետում ապահովել ՀՀ կենտրոնական բանկի՝ նորմատիվային կապիտալի չափի վերաբերյալ պահանջը: Արդյունքում Բանկի ընդհանուր կապիտալը գերազանցել է 34 մլրդ դրամը՝ նախորդ տարվա համեմատ աճելով մոտ 53%-ով: Ներգրավված լրացուցիչ միջոցները Բանկն ուղղել է իր գործունեության հիմնական ռազմավարական ուղղությունների՝ մանրածախ բիզնեսի զարգացմանը և փոքր և միջին բիզնեսի ֆինանսավորմանը:

«Յունիբանկի» կապիտալի աճով պայմանավորված Moody's Investors Service միջազգային գործակալությունը 2016թ. օգոստոսին բարելավել էր «Յունիբանկի» վարկանիշի կանխատեսումը՝ դարձնելով այն «պոզիտիվ», իսկ 2017թ.-ի մարտին բարձրացրել է՝ սահմանելով այն B2, կանխատեսումը՝ կայուն:

Ֆինանսական ցուցանիշներ, բիզնես պլանի կատարողականներ

2016թ. ընթացքում իրականացված միջոցառումների շնորհիվ Բանկն ապահովել է հետևյալ ցուցանիշները (համաձայն ՖՀՄՍ-ի).

- **ԱԿՏԻՎՆԵՐ** – 185.4 մլրդ ՀՀ դրամ, 10-րդ տեղը բանկային համակարգում: Տարեսկզբի համեմատ ցուցանիշը աճել է 17.2 %-ով:
- **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** – 150.5 մլրդ ՀՀ դրամ, 10-րդ տեղը բանկային համակարգում: Պարտավորությունների աճը կազմել է 11.2 %:
- **ԿԱՊԻՏԱԼ** – 34.8 մլրդ ՀՀ դրամ, 8-րդ տեղը բանկային համակարգում: Նախորդ տարվա համեմատ ցուցանիշը աճել է 53.4 %-ով:
- **ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ** – 118.6 մլրդ ՀՀ դրամ, 10-րդ տեղը բանկային համակարգում: Վարկային պորտֆելը տարեսկզբի համեմատ աճել է 7.7 %-ով:
  Առ 31.12.2016թ. Բանկի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 64%-ը: Դրամային վարկային պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 41%-ը, իսկ արտարժութային վարկային պորտֆելը՝ 59%-ը): Վարկային պորտֆելի միջին տոկոսադրույքը 31.12.2016թ. դրությամբ կազմել է 15.2 %:
- **ԱՎԱՆԴՆԵՐ** – 114.8 մլրդ դրամ, որից 81%-ը՝ 93.3 մլրդ դրամը բաժին է ընկել ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներին, 5-րդ տեղը ՀՀ բանկային համակարգում:
- **ԿՈՄԻՍԻՈՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** - 1 մլրդ ՀՀ դրամ:
  Արտարժույթի փոխարկային գործառնություններից ստացված եկամուտը կազմել է 594 մլն ՀՀ դրամ:

Հաշվի առնելով Յունիբանկի արձանագրած բարձր ցուցանիշները, կայուն ֆինանսական վիճակը և զարգացման ռազմավարությունը, Բանկի Խորհուրդը որոշում էր ընդունել իր սովորական բաժնետոմսերի սեփականատերերին, որոնք 28.11.2016թ. դրությամբ ընդգրկված են եղել Բանկի բաժնետերերի ռեեստրում, 2016թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի համար վճարել միջանկյալ շահութաբաժիններ՝ սովորական անվանական բաժնետոմսերի տեսքով՝ 12.9% տարեկան եկամտաբերությանը համարժեք հաշվարկով:

Հաշվետու տարում «Յունիբանկն» ամբողջովին անցում կատարեց «Պրոտոբեյզ Լաբարատորիզ» ընկերության կողմից մշակված նոր Proto CRM համակարգին, որի շնորհիվ շարունակել է սպառողական վարկավորման ծավալների աճ արձանագրել և ընդլայնել շուկայի իր մասնաբաժինը:

Բանկը շարունակել է ակտիվ աջակցություն ցուցաբերել ՓՄՁ-ներին և անհատ ձեռնարկատերերին՝ ձգտելով մեծացնել տնտեսության իրական հատվածի վարկավորման ծավալները: Այդ նպատակով, Բանկը շարունակել է համագործակցությունը միջազգային կառույցների, այդ թվում՝ Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) և Առևտրի և զարգացման Սևծովյան բանկի (BSTDB), ինչպես նաև Եվրոպական ներդրումային բանկի (EIB) և KfW գերմանական բանկի հետ: Տարվա ընթացքում Բանկը շարունակել է համագործակցությունը նաև Գյուղատնտեսական զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD), ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի հետ:

Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Բիզնեսի ծավալների ընդլայնմանը զուգահեռ «Յունիբանկը մշտապես ակտիվ ներդրումներ է կատարել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում: Բանկն ավարտեց Տվյալների մշակման շարժական ժամանակակից կենտրոնի ստեղծման աշխատանքները, որն իրենից ներկայացնում է ունիվերսալ տեղեկատվական ենթակառուցվածք՝ նախատեսված տեղեկատվական ռեսուրսների լիարժեք ռեզերվման ու անխափան աշխատանքի ապահովման համար:

ISO 27001:2013 միջազգային ստանդարտների շրջանակում «Bureau Veritas Certificationե ֆրանսիական ընկերությունն Յունիբանկում իրականացրեց աուդիտ և վերահաստատեց բանկի տեղեկատվական անվտանգության համակարգի համապատասխանությունը միջազգային ստադարտներին:

Քարտերի միջոցով իրականացվող գործարքների բարձր պաշտպանվածության մասին է փաստում PCI PIN Security միջազգային ստանդարտին համապատասխանատվության հավաստագրի ստացումը:

Սպասարկման ցանց, հաճախորդային բազա

2016թ. Յունիբանկը շեշտակի ընդլայնել է իր սպասարկման ցանցը. Հատուկ ֆիզիկական անձանց հարմարավետ սպասարկման համար բացվել է «Պարույր Սևակ» նոր մասնաճյուղը: 31.12.2016թ. դրությամբ «Յունիբանկի» սպասարկման ցանցը ներառում էր 46 մասնաճյուղ և 54 պրոմո կետ:

Բանկում 01.01.2016թ. դրությամբ սպասարկվել է 282,363 հաճախորդ, որոնցից 3,671-ը իրավաբանական անձինք են, 278,692-ը՝ ֆիզիկական անձինք, իսկ 01.01.2017թ. դրությամբ՝ հաճախորդային բազան ներառել է ավելի քան 325,000 հաճախորդ:

2016թ. շարունակվել են գործող մասնաճյուղերի վերակառուցման աշխատանքները՝ սպասարկման 'մեկ պատուհանի' անցման նպատակով, ինչպես նաև մի շարք մասնաճյուղեր առավել հարմարավետ տարածքներ տեղափոխելու ուղղությամբ:

«Յունիբանկը» շարունակել է զարգացնել նաև Unibank Privé-ի ուղղությունը: Unibank Privé-ի ծառայությունները ներկայացնելու և համագործակցություն հաստատելը նպատակով 2016թ.-ին բանկը մասնակցել է Թեհրանում կայացած «Հայաստան էքսպո» ցուցահանդեսին:

Կորպորատիվ կառավարում

Միջազգային կորպորատիվ կառավարման լավագույն սկզբունքները Բանկում ներդնելու և կորպորատիվ կառավարումը Բանկում առավել արդյունավետ դարձնելու նպատակով Բանկում շարունակել են ակտիվ գործել Խորհրդին և Վարչությանը կից հանձնաժողովները:

Բաժնետերերի և ներդրողների հետ համագործակցություն

Լինելով բաց բաժնետիրական ընկերություն և ունենալով մեծ թվով անհատ բաժնետերեր, «Յունիբանկը» մեծ ուշադրություն է հատկացնում մինորիտար բաժնետերերի իրավունքների և շահերի պաշտպանությանը: Այդ կապակցությամբ իր բաժնետեր հաճախորդներին Բանկն առաջարկում է մի շարք առավելություններ, այդ թվում՝ հատուկ տոկոսադրույքներ ավանդների համար, արտահերթ սպասարկում, անվճար Visa Infinite քարտ, օնլայն բանկինգ, դեպոզիտար պահատուփ, շուրջօրյա կոնսյերժ ծառայություն, Priority Pass և այլն:

Հաշվի առնելով ներդրողների զգալի հետաքրքրությունը պարտատոմսերի՝ որպես երկարաժամկետ ներդրումային գործիքի նկատմամբ, Յունիբանկը թողարկեց և հաջողությամբ տեղաբաշխեց 8% տարեկան եկամտաբերությամբ դոլարային անվանական արժեկտրոնային պարտատոմսեր:

2016թ. ապրիլին Յունիբանկը մասնակցել է Լոնդոնում կայացած պարտատոմսերի շուկային Cbonds Emerging Markets Bond Conference համաժողովին:

Կադրային քաղաքականություն

Բանկի կադրային քաղաքականությունն ուղղված եղել բարձր որակավորում ունեցող կադրային պոտենցիալի ձևավորմանը: Հատուկ ուշադրություն է դարձվում պրոֆեսիոնալ մակարդակի աճին և օպտիմալ վարչակազմակերպչական կառուցվածքի ձևավորման վրա: 2016թ.-ին կատարելագործվել է մոտիվացիոն համակարգը, կազմակերպվել են ուսուցողական սեմինարներ:

Գովազդային քաղաքականություն և հասարակայնության հետ կապեր

Հասարակայնության հետ կապերի և Գովազդի ծառայությունների աշխատանքը հիմնականում միտված է եղել Բանկի գործունեության, մատուցված ծառայությունների մասին իրազեկմանը և բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացմանը: Այդ նպատակով Բանկը շարունակել է ակտիվ համագործակցությունը ԶԼՄ-ների հետ՝ ապահովելով 100-ից ավելի հրապարակումներ: Բանկերի պրեսս-ռեյթինգի համաձայն՝ 2016թ.-ին Յունիբանկի ինդեքսը նախորդ տարվա համեմատ աճել է 2.7 անգամ, ինչի շնորհիվ բանկը պահպանել է իր տեղն առաջատարների թվում:

Հաշվետու տարում Յունիբանկը շարունակել է եթեր հեռարձակել «Ժողովրդական բանկ» հեռուստածրագիրը, որն ուղղված էր բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացմանը և հաճախորդներին բանկային ծառայությունների մասին մանրամասն տեղեկատվության ներկայացմանը:

Հաճախորդների հետ արագ հետադարձ կապի ապահովման նպատակով, Բանկը շարունակել է նաև իր ակտիվությունը սոցիալական ցանցերում՝ պահպանելով օգտատերերի թվով առաջատարի դիրքը Facebook-ում: